ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ
ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

Հունվարի 6-ին Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառի Սուրբ Աստվածածին Մայր եկեղեցում մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնի ուրախ առիթով Սուրբ և անմահ Պատարագ մատուցեց, ինչպես նաև շրջանների խորախորհուրդ արարողություն կատարեց թեմի հոգևոր հովիվ գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արարաջյանը:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկած հոգևորականները Սուրբ Պատարագ մատուցեցին նաև Գավառի մեկ այլ՝ Հացառատ թաղամասի եկեղեցում, ուր օրվա պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Բարսեղ աբեղա Փիլավչյանը, ինչպես նաև Մարտունու շրջանի Արծվանիստ գյուղի Վանեվանի վանքում: Վանեվանի պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Ժոռոյանը:

Երկու եկեղեցիներում էլ մատուցվող Պատարագի ընթացքում դպրաց բաժինը երգեցին Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի կիրակնօրյա հոգևոր վարժարանների երգչախմբերը:

Օրվա երկրորդ կեսին թեմի առաջնորդ Անանիա սրբազանն այցելեց Գավառի մանկատուն, ծանոթացավ սանների հետ, հետաքրքրվեց նրանց վիճակով, առօրյայով, բաժանեց խաղալիքներ ու գրքեր:

ՎԱՉԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ